

Վերջապէս հռշա է նկատել, որ օրեկտիւիզմը յատուել է ռացիսնալիզմին, ինչ չափով որ ուս իմացութեան օրդանը համարում է մտածութիւնը, որը գերանհատական օբեկտիւ նշանակութիւն ունի և որի միջացաւ, ըստ ռացիսնալիզմի, կարելի է թափանցել և վերահասու լինել ինքնին իրականութեան: Խսկ ոռւքեկտիւի զմն էլ յատուկ է էմպիրիզմին, ինչ չափով որ փորձնական ըմբոնութիւնները անհատական են և գուրեկ օբեկտիւ արժեքից:

Այսպիսով հիմնական ուղղութիւնները մնում են ուսցիսնալիզմն ու էմպիրիզմը, միւսները՝ նրանց ընաւորութեանը յատուկ պատկանելիքներ են. և բղասում են զբանցից: Եթէ մենք աչքի անցկացնենք թեթևակի էմպիրիզմի և ռացիօնալիզմի ռեալ-պատմական դարձացումը, ինչպէս նա տարածւում է ժամանակի գծի վրայ, այսուհետեւ տանք դրանց տրամադրանական գնահատութիւնը, մենք դրանով պատասխանած կլինենք և գնահատած նաև միւս ուղղութիւնները, ինչ չափով նրանք կախուած են դրանցից: (շարունակելի) 3, 3.

(Հարունակելի) 8. 8.



**ԶԵԼԱԳԻՑՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՀԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

ՏԱՐՅԱԿԱՆ ԳՎՐՈՅՆԵՐՈՒՄ

VI

## Մերողական աշխատանք

Զեերի գուտ տեսական ուսուցումը վերացական ձևով ժողովրդական զարոցի աշակերտի համար նոյն չափ ձանձրացուցել, որչափ և անկարելոր (իւրաքանչիւր ձև, լինի այն տարածական թէ լեզուային, հետաքրքիր է այն չափով, որչափ նայովանգակութիւն, իմաստ է երևան հանում: արտայայտութիւն է մի մոքի կամ ներկայացումն մի իրի): Ոչ թէ մաթեմատիկական իմաստութիւն, մեռած ժանօթութիւն կամ գուտ տեսական իմացութիւն պէտք է սանին մատակարարել, այլ նրան պէտք է առաջնորդել զէպի կենդանի կարողութիւն, ձևերի լեզուի գործնական ըմբռնումը. աւանդման միջոցին միշտ պէտք է աչքի առաջ ունենալ իրականը, այն ամեն կա-

հակադրութեան հետ՝ վերջին (հոգեբանական) ուղղութեանց հակադրութիւնը մի մասնակի արտայայտութիւն է փիլիսոփայական լնդիանուր ուղղութեանց, որոնք աւելի խորն են եւ հիմնական:

նոններն ու օրէնքները, որոնք անհստագեշտութեամբ չեն ըրդն խուռմ խօսուկցութեան նիւթից, յիշողութեան բեռ են և անարժէք կցորդ գիտութեան:

Մեր նպատակագրութեան համաձայն ձեւրի գիտողութիւնը, ներկայացումը և հաշուելը չպէտք է մի միայն զուտ ձեւրի ուսումնասիրութիւն դառնան, այլ լինին ու մնան իրադիտութիւն, ընագիտութիւն և հայրենագիտութիւն:

Զեագիտութիւնը հայրենագիտութեան ձեւկան կողմն է ներկայացնում. թանձրացեալն այստեղ սոսկ զարդ կամ գեկուրացիա չէ, կամ նպատակին հանելու մէկ միջոց, այլ ըստինքեան նպատակ. այս մասնագիտութեան կրթիչ ոյժը գտնվում է իրականի և երկրաչափական ձեւկանի կապակցութեան մէջ:

Դասաւանդութեան միջոցին ընդհանուր արժէքաւորը, էականը, մնայունը ձեռք բերելու համաս յանձնաբարեկի է ֆօրմալ աստիճանների գործագրութիւնը. զուտ մաթեմատիկական ապացուցախնդրութիւնը դուրս է ժողովրդական դըպոցի սահմաններից:

Ռացիօնալ գառը հայեցողական (իրազննական) դառնալու համար ոչ միայն պէտք է յենուի ծննդավայրի ձեային աշխարհի վրայ, այլ և հետեւելու է մանկան մայրենի ձեային լեզուին և հետազօտելու է այն արտացայտութիւնները, որոնք ժամանակի ընթացքում ըերնէ ըերան անցնելով մաշուել են, ինչպէս դըպուները՝ ձեռքէ ձեռք անցնելիս. նրանց զրոշմը պէտք է պարզէ, ձեագիտութեան տեսակետից լուսաբանէ, հակադարձ կերպով ևս ձեւրի պատակերացումները կապարզուեն և կամրանան, եթէ ընդարձակեւում են նրանց իրական հիմունքները:

աա) Ձեւրի գիտողութիւնը. մէթոդական ի՞նչպիսի ճանապարհով ըմբռնելի պէտք է զարձնել ոանին տարածական ձեւրը, նաև պէտք է իրավէս (առարկայապէս) և մանրամասն զիտուզութեան առնուեն մի քանի մորմիններ, որոնք աշակերտներին լաւ ծանօթ են և որևէ է տիպական ձեւ բացորոշ երեւան են հանում. յետոյ աշակերտները կհամեմուտեն այդ մարմինները և կիվրացնեն (abstractia) նրանց մէջ եղած ընդհանուր ձեւը, կըլիշտակեն վերացուած ձեւի ընդհանուրը յատկանիշները և կմիացնեն մի գողափարը կամ դիւրին ըմբռնելի կանոնի ներքոյ: Այս ճանապարհով ստացած գաղափարը նախապէս ձեռք ըերած նման կամ հակագիր գաղափարների կամ օրէնքների հետ համեմատելուց և նոր օրինակների նկատմամբ կիրառնելուց յետոյ, պէտք է անցնել ամրապնդման (Fixierung), (կանոնը գրելով զբաժանակի վրայ կամ տետրակում), որան հետեւելու է արդէն սովորածի զանազանակերպ գործագրութիւնը զործագրութեան գործագրութիւնը զործագրութեան:

(վարժութիւն): Պէտք է խուսափել յատկանիշները, անունները և գաղափարներ անդիր անել տալուց՝ յեշողութիւնը ծանրաւելունելուց: Գործադրութեան աստիճաննում աշակերտները պէտք է ձեռք բերած նոր իմացութիւնը տարածեն չսովորած (չյիշատակուած) մարմինների վրայ. ձեւագիտական խնդիրները աշակերտին պէտք է զրգեն ժողովելու հայրենի երկրի ձեւագիտական թանձրացեալ նոր նիւթեր և խորհրդագելու նրանց նպատակի անհրաժեշտութեան և օգտակարութեան մասին. պէտք է խօսուի ընութեան և արուեստի ձեւերի նպատակայարմարութեան և գեղեցկութեան մասին, փորձառական ընդհանուր ձեւային օրէնքներ (ոչ խիստ գիտական քանաձեռումով) պէտք է մշակուեն առանձին ձեւային տիպերի հանդէս դալու և գործադրութեան նկատմամբ: Ստորին կարգե գպրոցներում օրէնքների քանաձեռումը մէկ դի կարելի է թողնել, սակայն ընդհանրապէս օրինակարգութեան և ընդհանուր ճշմարտութիւնների հասկացողութիւնը չպէտք է բացակայէ թէպէտ հարցերի և խնդիրների նպատակն է (Ե. ձեւական տսակնան): ամբազընդումն՝ գործադրութեան և վարժութեան միջոցով, ըայց յաճախ այդպիսով նաև ըուն նիւթն է ճոխանում և խօրանում:

Մողելները և նկարները, որոնք ձեւերը վերացական կերպով են ներկայացնում, կարելի է աշակերտներին ի ցայց գնել միայն այն գէպքում, եթէ նախապէս թանձրացեալ ձեւերը գիտողութեան են առնուած եղել. նրանք, ուրեմն, ոչ թէ ելակէտ պէտք է դառնան, այլ մեկնաբանող և պարզաբանող միջոց:

Քերի ներկայացումը.— Զերի ներկայացումն եսո, յենուելով ձեւերի գիտողութեան վրայ, նոյն մեթոդական աստիճաններն է անցնելու (հայեցողութիւն, գաղափարներ և կանոններ մշակել և բազմակողմանի գործադրութիւն): Զերի ներկայացման միջոցին անցոնազօսիկ կերպով կարելի է գտնել շատ ճշմարտութիւններ. որոշ նիւթեր աշակերտին կարելի է մատչելի գարձնել միմիայն պատկերաւոր ներկայացման միջոցով. (օրս տրամադրիծ, կեղրոն): Այս իսկ պատճառով ձեւագիտական ներկայացումը չպէտք է մի սոսկ կցորդ նկատուի ձեւերի գիտողութեան, այլ պէտք է գրաւէ իր լնքնուրոյն տեղը ձեւագիտութեան գասի մէջ: Մինչդեռ ձեւերի գիտողութեան միջոցին կերպարանքի ամբողջութեան վրայ է ուղղուած մեր ուշագրութիւնը, ներկայացման միջոցին ամբողջ ձեւ նախ լեր է լուծում իր բաղադրիչներին և ապա համագրւում է ամբողջութիւնը: Ամբողջութեան այս տարրաւուժումը համապատասխանում է գիտակցութեան անձկութեանը. ամբողջ պատկերը (ձեւային) այնպէս պէտք է ներկայացուի, որ նրա իւրաքանչիւր

մասը գէթ մի անդամ ընկնի գիտակցութեան դիտակէտը, այլապէս ասած՝ պարզ և որոշակի պատկերացուի։ Զեագիտական ներկայացումը վերլուժմամբ և համադրութեամբ կոչուած է ձեւը խոր ըմբռնումն առաջ բերել սանի մէջ, այն ձեագիտութիւնը, որ սահմանափակում է միմիայն ձեւը գիտողութեամբ և անուշագիր է թողնում ներկայացումը՝ մնում է թիւի և ճանապարհի կէսին։ Նիւթին նայած պէտք է զանազանել երկու տեսակ ներկայացումն՝ նկարչական և մարմնային։ ակներեւ է, որ ձեագիտական ներկայացումը առաւելապէս ծանրանալու է մակարդակների ձեւը նկարելու վրայ, մինչդեռ սորմնային ձեւը (այսպէս կոչուած երկրաչափական մարմններ) պատրաստելը պէտք է թողնուի աշակերտների տնային աշխատասիրութենք։

գգ) Զեւը հաշուումը.—Զեագիտական հաշիւները պէտք առընչութեան մէջ մտնեն գործնական կեանքի խնդիրների հետ։ որոնք կապ ունեն իրականութեան հետ։ հաշուելու մի քանի նման դէպքեր իրար հետ համեմատելուց յետոյ, պէտք է մշակուի հաշուելու ընդհանուր կանոնը, որն յետոյ պէտք է ամրապնդուի վարժութեան շնորհիւ՝ բազմազան իրական օրինակների նկատմամբ գործադրութիւն գտնելով։ Գործադրութեանը ծառայող իննդիբները (արտածական խնդիրներ) նոր առընչութիւնն հաստատում ուղղորածի և մտնելան փորձառութեան շրջանում գտնուած, բայց տակաւին չմշակուած նիւթի հետ, ուստի և այդպիսի արտածող խնդիրները աւելի ազատ և բարդ ընոյթ են կըում, քան օրէնքի (կանոն) զարդարմանը ծառայող, այսպէս կոչուած՝ ներածող խնդիրներ։

Թէ ներածող և թէ արտածող խնդիրները չպէտք է գործ ունենան մերկ և մեռած թուերի հետ։ Նըսնք պէտք է անհատական և տեղական դրոշմ կըեն և գործնական իմաստ պարունակեն իրենց մէջ։ այդ անհրաժեշտ է ամենից առաջ նսահամար, որ աշակերտը տեսնէ, որ ձեագիտական ըոլոր ձեռնարկութիւնները պլարապ խաղեր չեն, այլ պէտքական են կեանքի համար։ Բոլոր խնդիրներն էլ պէտք է իրենց մէջ հարկադրեն, իրականութիւնից անհրաժեշտաբար ըղխող ոյժ ունենան։ Եթէ հայրենի երկրի իրականութիւնից վերցրած թանձացեալ օրինակները արդէն բաւարար չափով լուսաբանուած են և անհատական, տեղային ընոյթ կըող խնդիրները սպառուած, նոր կարելի է գիմել վարագութուած՝ ընդհանրական (universel) և սեռական (générel) ընոյթ կըող խնդիրների, որոնց լուծման միջոցին աշակերտը պէտք է նախապէս ողլանը կազմէ։ Ամենից մեջը միայն կարելի է աշակերտներին առաջարկել վերացական

խնդիրներ՝ ոսկէ թուերով, որունք աղդէն ամբարած պաշարեցնորհներ կջերմանան և կկենդանանան։ Արտածող խնդիրները մեծ նիւթ կարող են մատակարարել տնային աշխատանքի համար։

Բանաձեռները (ֆօրմուլա) միանդամայն աւելորդ են։ բոլոր մակարդակիներն հաշուելիս հիմք պէտք է ընդունել ուղանկիւնու մակարդակի տիպական հաշիւը։ իսկ բոլոր խորանարդ հաշիւները պէտք է հիմնել ուղանկիւն հատուածակողմի (սեան) խորանարդ հաշուի վերայ, որպէսզի հաշիւները չխճճուեն և միւթիւն կազմեն միմիանց հետ ներքին՝ անհրաժեշտ կապով։ յիշողութիւնն եռ կշահէ այն տեսակէտից, որ կունենայ ամուր նեցուկ։

Նպատակայարմար ձեռվ պատրաստած լի դատարկ մողելների (աւազի, ջրի և կշռի չափի համար) միջոցով գիւրին եղանակով հասկանալի կարելի է գարձնել մարմինների բովանդակութիւնաց հաշուելը։<sup>1)</sup>

### Ալլ եւ ալլ։

1) Հեերի գիտազութեան միջացին աշակերտները իրենց յուշատերում պէտք է նշանակեն մարմինների ձեռքի, մակարդակիների, անկիւնների, գծերի, ընութեան և արուեստի, ինչպէս և նպատակայարմար և գեղեցիկ ձեռքի մասին կազմած գաղափարները (օքէնքներ, ընդհանուր մտքեր, գատողութիւններ և մեկնութիւններ), մինչդեռ ձեռքի հաշիւները անելիս պէտք է տեսրակի մէջ անցկացնել միայն մի նմուշ օրինակելի հաշիւ և կամ ընդհանուր արժէք ունեցող հաշուելու օքէնքը։ մի առանձին տեսրակի մէջ էլ պէտք է գծագրուեն ձեռքի նկարներ։

2) Լաւ կիննի, սր աշակերտն իր ձեռքի տակ մի ինդրագիրք ունենայ, որը ստկայն բացի հաշուի վերաբերեալ խնդիրներից իր մէջ պարունակէ նաև ձեռքի գիտազութեան և ներկացացման վերաբերեալ խնդիրներ։<sup>2)</sup> Վնասակար են այն դասուագրքերը, որոնք ձեւագիտական դրական իմացութիւնը կազմ և պատրաստ մատակարարում են աշակերտին։ ինքնուրոյն կերպով աշխատանք ուսուցչի ուն ու ձեռը շղթայում են պատրաստի գասագիրը թէ ըստ բովանդակութեան և թէ ըստ ձեւի։

1) Հայսիդի հաշուելու մոդելները կարելի է ստանանալ Lehrmittelhandlung K. Hering. Auerbach & Vogt.

2) E. Zeissig und M. Burckhardt, Aufgabenheft für Formenkunde. 2. Hette. a) Geradflächige Körperperformen und Geradlinige Flächen. b) Krummflächige Körperperformen und krummlinige Flächen.

3) Գծագրական (գրաֆիկ) ներկայացման համար աշակերտն իր ձեռքի տակ պէտք է ունենայ մի քանոն՝ մի երեսը մետրային միւսը արշինի բաժանումներով, մի անկիւնաչափ (փայտէ ուղանկիւն եռանկիւնի), մի տրանսլորտէր և մի կարկին:

4) Մի յատուկ նախապատրաստական իրազննական ընթացքի պէտքութիւն չկայ, որովհետեւ ձեւագիտութիւնը իր ամբողջ ընթացքում իրազննաբար է աւանդուելու:

(շարունակելի)

Ո. Օ.



## ՄԵՂԱՆՉՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԼՄ

(1910 թ. թերթերից).

Նոր լեզուի մշակութեան դադարիարն է՝ որրան կարելի է, շատ եւ առաւել մեծ բազմութեան հասկանալի կերպով խօսել:

### Ա. Նալբանդեանց.

Լեզուն գեղեցիկ ըլլալու ճամփը պէտք է ըլլայ ալ արգ Անգուն պարզ կրլայ՝ երբ . . . գաղափարի մը՝ զոր ամեն մարդ ունի. իրի մը՝ զոր ամեն մարդ կճանչնա. զոր ծողութեան մը՝ զոր ամեն մարդ էկրէ. կտրուի այն անունը, զոր ամեն մարդ կուտայ:

### Հ. Ա. Անդրիկեան.

Պարբերական թերթ կոմ թերթեր կարգացողներն, անշուշտ միակերպ չեն վերաբերուում գործին: Ոմանք կարգում են՝ իմանալու կեանքի անցուգարձերը, ոմանք՝ նորոյթներ իմանալը և այլն: Նատ հաւանական է, ոսկայն, որ այդ բոլորի հետ միասին դանուեն կարգացողներ, որոնք առանձին ուշք լինեն դարձնելիս այլ և յօդ ու ածի ձևի, լեզուի հայցիութեան և իմաստի պարզութեան վրա:

Ես, գոնէ, մէկն եմ այդ վերջիններից. և ուզեմ-չուզեմ, ուշք եմ դարձնում զըստածքի այդ կողմի վրա էլ: Աւելին կասեմ. ոչ-հայ ձեերն ու անկանոնութիւններն ուզգակի ծակում են աչքերս: Այդպիսի դէպքերում, ըոլոր կարգացած մի կողմն է մնում, իսկ գրութեան որևէ օտարութիւն կամ բառ՝ ուզգակի կլանում է բոլոր ուշքս: